ԷՍՍԵՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

→ Էսսեները պետք է համապատասխանեն մրցույթի թեմային,
→ Պարունակեն միմյանց չհակասող իրական և փաստարկված տվյալներ՝ տրամաբանական հաջորդականությամբ,
→ Ցանկալի է, որ ներկայացված լինի հիմնական թեզը, հակաթեզը և սինթեզը:
→ Լինեն ինքնատիպ, հիմնավորված և պարունակեն որոշակի նորույթ,
→ Համապատասխանեն հետևյալ տեխնիկական պահանջներին՝
- Առավելագույն ծավալը՝ 15 էջ,
- Էջի լուսանցքները՝ վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2,5 սմ, ձախից՝ 3 սմ և աջից՝ 1 սմ,
- Տառատեսակը՝ GHEA Grapalat կամ GHEA Mariam,
- Տառաչափը՝ 12, տողամիջյան հեռավորությունը՝ 1,5,
- Այլ աղբյուրներից մեջբերումների դեպքում հղումները պարտադիր են,
- Թույլատրվում են աղյուսակներ և գծապատկերներ, որոնցից՝ յուրաքանչյուրի ծավալը չպետք է գերազանցի 1 էջը:

→ Էսսեները պետք է բաղկացած լինեն հետևյալ բաժիններից.

- **Հեղինակի անուն, ազգանուն** (վերևի աջ անկյունում),
- **Վերնագիր** (մեկ տող ներքևից, կենտրոնական հավասարեցմամբ՝ մեծատառերով)
- **Համառոտագիր:** Էսսեի ամփոփ բովանդակությունը 0.5-1 էջի սահմաններում:
- **Հիմնաբառեր:** 4-6 հիմնաբառ:
- **Վերլուծություն:** Թվային ցուցանիշների կիրառումը և դրանց վրա հիմնված հաշվարկների իրականացումը խրախուսվում է:
- **Արդյունքներ:**
- **Եզրակացություն:** Պետք է պարունակի նաև հստակ ձևակերպված առաջարկություններ:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. մրցույթի մասնակցության <u>հայտ</u>

2. տեղեկանք դեկանատից՝ ուսման վերաբերյալ (ստորագրված և կնքված),

3. անձնագրի պատճեն,

4. սահմանված պահանջների համաձայն ներկայացված էսսե:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Էսսեները գնահատվում են մրցութային հանձնաժողովի կողմից՝ ըստ ստորև ներկայացված գնահատման սանդղակի*

№	Գնահատման չափանիշ	Միավոր
1	Էսսեի համապատասխանություն առաջադրված նպատակներին և խնդիրներին	0-5
2.	Հիմնավոր և միմյանց չհակասող փաստարկների առկայություն	0-5
3.	Օրիգինալություն, նորարարական մտքի առկայություն	0-5
4.	Հիմնավորված եզրակացություններ և կիրառական առաջարկություններ	0-5
5.	Հետազոտության ներկայացման որակը	0-5
Ընդամենը՝		0-25

*Գնահատվում են մրցութային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: